ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 18

«06» 05 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 37 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 96 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 37 հրամանով հաստատված հավելվածի 2-րդ բաժնի 14-րդ գլխի 50-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 2» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 3» բառերով, իսկ նույն գլխի 51-րդ կետի «Դատախազության դատախազ 4» բառերը՝ «Դատախազության դատախազ 3» բառերով:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ